

## ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

### ՊՐԵՒՌՈՎԼԱԽ ԵԿԵՂԵՑԻ

ՌՈՒՄԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՏԱԿԱՐԴԻ ԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Բարձրագոյնս հաստատուած են ռուսաց եկեղեցու առաջիկայ արտակարդ ժողովի կազմի և գործավարութեան կարգի վերաբերեալ հետևեալ օրէնքները:

1. Ժողովը կազմուում է եպիսկոպոսներից, կղերիկոսներից և աշխարհականներից:

2. Թեմակալ եպիսկոպոսները անպայման մասնակցում են ժողովին, իսկ փոխանորդ և անպաշտօն եպիսկոպոսները մասնակցում են ժողովին ո. Սինոդի հրաւիրանոք:

3. Այն թեմակալ եպիսկոպոսները, որոնք չեն կարող ներկայ գտնուել ժողովին յարդելի պատճառով, ուղարկում են իրենց տեղապահներին, հոդեուական անձերից, ձայնի իրաւունքով:

4. Ժողովի հրաւիրուած կղերիկոսներն ու աշխարհականները մասնակցում են ժողովի ըոլոր գործերի ու խնդիրների խորհրդածութեանը, ուակայն ժողովի որոշումներն ու վճիռները կազմում ու ստորագրում են, մի միայն եպիսկոպոսները կամ նրանց տեղապահները:

5. Խնդիրները նախապէս մշակելու համար կազմուում են, ինչպէս եպիսկոպոսներից, նոյնպէս և կղերիկոսներից և աշխարհականներից, առանձին խորհուրդներ, եթէ ժողովը կարևոր համարի, որոնք և իրենց եղբակացութիւնները առաջարկում են ժողովի քննութեանը:

6. Քւրաքանչիւր թեմից եպիսկոպոսի հետ միասին ժողովի են գալիս երկու անդամ՝ մէկը կղերականներից, միւսը աշխարհականներից:

7. Պալատական և զինուորական հռուորականութիւնից աւագ քահանաների հետ ժողովի են գալիս երկուական անդամ, մէկը քահանաներից և միւսը եկեղեցու երեսփոխներից՝ աւագ քահանայի ընտրութեամբ:

8. Թեմական ընտրութիւնները ժողովին համար կատարուում են ծխական, գործակալական շրջանի և թեմական ժողովներում: Ծխական ժողովներում իւրաքանչիւր հոգեօրականի գէրը ընտրուում է մի աշխարհական ներկայացուցիչների հետ գործակալական թեմական ժողովում ընտրում են իրենց միջից մի քահանաց և մի աշխարհական թեմական ընտրական ժողովին համար: Աերջինս իւր կազմի միջից ընտրում է երեք հոգեօրական և երեք աշխարհական, որոնցից թեմական առաջնորդը հաստատում է մի քահանացի և աշխարհականի ժողովին մասնակցելու համար: Այդ ընտրութեանց կարգը որոշուում է ո. Սինոդից մշակած յատուկ կանոններով:

9. Ժողովին մասնակցում են անդամի իրաւունքներով և Սինոդի հայեցազութեամբ ներկայացուցիչներ վանքերից, հոգեօր ճեմարաններից և այլ եկեղեցական հաստատութիւններից, նոյնպէս և մասնաւոր անձինք, որոնք յայտնի են աստուածաբանական հմտութեամբ կամ դէպի եկեղեցու լուսաւորութիւնն ունեցած սիրով և առ հասարակ իրենց ունեցած ջերմեւանդութեամբ դէպի եկեղեցին:

10. Ժողովին նախագահում է ո. Սինոդի նախագահը, իսկ միւս երկու մետրոպոլիտները ներկայանում են իրեն տեղապահներ:

11. Ժողովի գործակարութեան համար ո. Սինոդի կողմից կազմուում է ատենագալրութիւն սինոդական ժառայողներից, որ ենթարկուում է ժողովի նախագահին: Ի գործակցութիւն կարող են հրաւիրուել գիտական աստուածաբաններ և կանոնիկոսներ:

12. Ժողովի նիստերը պէտք է բաց լինին, սակայն մի քանիսը կարող են լինել նաև գոռնփակ, եթէ այդ անհրաժեշտ է համարում ժողովը. ըստ որում կողմնակի անձանց թոյլտուութեան կարդը որոշուում է ո. Սինոդից հաստատուած կանոններով:

13. Ժողովի աշխատանքները հրատարակուում են գիւտանդպրութեան կողմից կամ համառօտ տեղեկութեանց կամ ստենոգրաֆիական հաշիւների ձեռով:

14. Ժողովի տեղ նշանակուում է Մուկուան:

Մուկուտառում Սինոգի տպարտնից լոյս կտեսնէ Յովհաննու աւետարանը Աւելույնի բարեառով, ապա կվերջանան Մատթէսի և Մարկոսի աւետարանները ոլաւոն ընադրով միասին, ապա կսկսուի չորս աւետարանիների տպագրութիւնը միասին միայն Աւելույնի բարեառով:

Յայտարարելով այս լուրը „Պերք. Եկեղ. Կայութ. Ակատում է, որ ընդհանրապէս սուրբ և առաւտաձպաշտութեան դրբեր զանուզան լեզուներով և բարբառներով, ինչպէս և թարգմանականները, չափազանց քիչ են տպագրուում:

Որուսաց Սինոդի որոշումը. Մայիսի 12-ին Սինոգը քննում թեան նիւթ գարձնելով այն հանգամանքը, որ պետական Դռւմայի՝ յեղափոխական կուսակցական պատկանող մի քանի անգամ քահանաներ բացակայում էին մոյսիսի 7-ի Գումայի նոտից, որ քննուում էր Կայսեր կենաց գէմ գաւադրութեան առթիւ արտ ած հացալնդումը և զբանով յայտնի կերպով խուսափում էին կայսերասպան մտադրութիւնը պախարակելուց՝ հրամայեցին յանձնաբարել Անտոն Մետրոպոլիտին՝ հրաւիրել յեշեալ քահանաներին և յայտնել, որ պարտաւոր են բացատրութիւն տալ Գումայի նիստից բացակայելուն առթիւ և անյապազ թողնել այն կուսակցութիւնները, որոց պատկանում են՝ հրապարակուալէս այն մասին յայտարացելով. իսկ պահանջը կատարել չուզելու գէպրում, պարաւոր են կամովին հրաժարութել քահանայական կոչումից, որ անյարիր է յեղափոխական հայեացըների և կառավարութեան դէմ աւելիչ գործունէութեան հետ:

Այս առաջարկութիւնը մերժելու դէպօւմ՝ նոցա արարքի վերաբերեալ քննութիւնը կուղացուի իրենց թեմական առաջնորդներին:

### Հասարակաց երգեցողութիւնը.

Որուսաց տաճարներում եկեղեցական կետնքը կրկին նորուգելու միջոցներից մինը համարում է Ի. Ս.-ին հասարակաց երգեցողութիւն մտցնել եկեղեցիներում։ Այս նոր հարց չէ, սակայն հոգեռը մամուլը անտարբեր է վերաբերուել մանաւանդ հոգեռը գասը կարծես տրամադիր չէ այս խնդրով զբաղուելու, դիսացաւութիւնից փախչելով։

Բայց հեղինակը շատ կարեւոր և շատ ժամանակակից է հա-